ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2/3.2-4-25

ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի
նախագահի 2025 թվականի հունվարի 9-ի N1-Ա հրամանով ստեղծված
մրցութային հանձնաժողովի նիստի

2025թ. հունիսի 10-ին տեղի ունեցավ Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2024 թվականի դեկտեմբերի 23-ի «2025 թվականի «Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը» ծրագիրը, 2025 թվականի ծրագրի իրականացման միջոցառումների ժամանակացույցը և ծրագրի իրականացման միջոցառումների ծախսերի նախահաշիվը հաստատելու մասին» N3037-Ա հրամանի 1-ին կետի 2-րդ ենթակետով հաստատված **2025 թվականի «Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը» ծրագրի** (այսուհետ՝ Ծրագիր) հավելված 2-ի 3.2 կետով նախատեսված **«Զբոսաշրջային ներքին ցուցահանդեսի կազմակերպում և խթանում»** միջոցառման իրականացումն ապահովելու նպատակով ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի նախագահի 2025 թվականի հունվարի 9-ի N1-Ա հրամանով ստեղծված մրցութային հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը:

Նիստին մասնակցում էին՝

Ա.Մկրտչյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի զբոսաշրջության քաղաքականության վարչության պետ, Հանձնաժողովի նախագահ
Դ.Կարապետյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի մարքեթինգի և խթանման վարչության պետ
Ա.Բաբայան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի միջազգային համագործակցության վարչության պետի տեղակալ
Լ.Բասմաչյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի մարքեթինգի և խթանման վարչության խորհրդական
Ա.Ոսկանյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի մարքեթինգի և խթանման վարչության խորհրդական
Զ.Հայրապետյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի զբոսաշրջության քաղաքականության վարչության գլխավոր մասնագետ
Շ.Հովսեփյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի զբոսաշրջության քաղաքականության վարչության պետի տեղակալ, Հանձնաժողովի քարտուղար

Քվորումն ապահովված է:

Լսեցին՝

Հանձնաժողովի նիստի օրակարգի մասին:

Որոշեցին՝

Հաստատել Հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը.

- Մրցույթի արդյունքների ամփոփում:

Լսեցին՝

Հանձնաժողովին ներկայացվեց, որ **2025 թվականի «Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը» ծրագրի** շրջանակներում հայտարարված կազմակերպությունների ընտրության մրցույթի գործընթացը իրականացվել է armeps.am համակարգի միջոցով:

Նշվեց, որ

1. Armeps.am համակարգի միջոցով Ծրագրի հավելված 2-ի 3.2 կետով նախատեսված **«Զբոսաշրջային ներքին ցուցահանդեսի կազմակերպում և խթանում»** միջոցառման իրականացման նպատակով ներկայացվել է 1 (մեկ) հայտ՝

- «ՄԵՆՔ ՓՐՈԴԱՔՇՆ» ՍՊԸ-ի կողմից:

2. Armeps.am համակարգի միջոցով հանձնաժողովի անդամների գնահատման արդյունքում Ծրագրի հավելված 2-ի 3.2 կետով նախատեսված **«Զբոսաշրջային ներքին ցուցահանդեսի կազմակերպում և խթանում»** միջոցառման իրականացման նպատակով ներկայացված թվով 1 (մեկ) կազմակերպության՝

- **«ՄԵՆՔ ՓՐՈԴԱՔՇՆ» ՍՊԸ**-ի կողմից ներկայացված հայտը համապատասխանում է մրցույթի հրավերով սահմանված չափորոշիչներին, սակայն Հանձնաժողովը առաջարկում է կազմակերպությանը իր կողմից ներկայացված ֆինանսական նախահաշվում կատարել փոփոխություններ: Մասնավորապես.

Համաձայն հրավերի 2.3 կետի՝ ցուցահանդեսների կազմակերպման մասնագիտական թիմի ապահովման համար նախատեսված է աշխատավարձ՝

- 1 (մեկ) ծրագրի ղեկավար կամ պատասխանատու անձ (առնվազն 1 տարվա աշխատանքային փորձով),
- 1 (մեկ) թվային մարքեթինգի մասնագետ (առնվազն 1 տարվա աշխատանքային փորձով),
- 1 (մեկ) գրաֆիկ դիզայներ՝ ըստ պահանջի (առնվազն 1 տարվա աշխատանքային փորձով),
- 1 (մեկ) պետական գնումների լիցենզավորված մասնագետ:

Անհրաժեշտ է նշել, որ աշխատավարձը դրամաշնորհի շրջանակներում չի կարող գերազանցել ծրագրի ընդհանուր արժեքի **10%-ը**: Ուստի ֆինանսական նախահաշվում 2.1, 2.2, 2.4 կետերի համար կարող է նախատեսվել աշխատավարձ, այդ թվում 1.1 կետով ծրագրի ղեկավարի համար: Նախահաշվի 1.1 կետում նշված ծրագրի ղեկավարի աշխատավարձի միավորի քանակը (3 ամիս) չի համապատասխանում կազմակերպության կողմից ներկայացված ծրագրի տևողությանը (01.08.2025-07.10.2025):

Միաժամանակ, հրավերի 2.3 կետով չի պահանջվում հանրային կապերի մասնագետի ծառայություն, հետևաբար ծրագրային ծախսերում 2.3 կետը ոչ նպատակային է և առաջարկվում է հանել ծախսերից:

Քանի որ, դրամաշնորհի հրավերով և կազմակերպության ներկայացված ֆինանսական նախահաշվով նախատեսվում է ծրագրի ղեկավար, հետևաբար 2.5 կետով սահմանված ծրագրի համակարգման ծառայությունը ևս Հանձնաժողովը համարում է ոչ նպատակահարմար և առաջարկվում հանել ծախսերից, կամ իրականացնել ոչ դրամաշնորհի հաշվին: Անհրաժեշտ է նաև հաշվի առնել, որ ֆինանսական նախահաշվի 2.19 կետով սահմանված 3*6 չափերով տաղավարում պետք է միաժամանակ լինեն 8 անձ, 3 սեղան՝ 2 մեծ, 1-ը համեմատաբար փոքր:

Համաձայն դրամաշնորհային հրավերի նախատեսված է 1 ժամ տևողությամբ համերգ, հետևաբար 2.23 կետով սահմանված նվագախմբի հոնորար չի նախատեսվում, նպատակահարմար է դա նախատեսել համերգային ծրագրի համար:

2.25 կետում կազմակերպությունը պետք է հստակեցնի, որ տրանսպորտային ծառայությունները նախատեսված են նաև մարզերի համար:

2.28 կետով սահմանված նոթատետրերը և գրիչները, եթե տրամադրում է հյուրանոցը՝ ընդունելի է, իսկ եթե նախատեսվում է տպագրել ապա կարիք չկա, քանի որ ԶԿ-ն կտրամադրի իր բրենդինգով տարբերակները:

Անհրաժեշտ է առաջարկել կազմակերպությանը հստակեցնել 2.36 կետով նախատեսված ֆոտոզոնայի համար նախնական ի՞նչ եք պատկերացրել, որի համար նախատեսվել է 26 400 ՀՀ դրամ:

Հաշվի առնել, որ 2.39 կետով դրոշի պատվանդանի ձեռքբերման պարագայում անհրաժեշտ է հանձնել Զբոսաշրջության կոմիտեին, այլապես նախատեսել վարձակալություն և դրա մասին նշել ֆինանսական նախահաշվում:

Ընդունել ի գիտություն, որ 2.42 և 2.43 կետերը համաձայն դրամաշնորհային մրցույթի հրավերի պետք է նախատեսել միջոցառումից 1 ամիս առաջ, իսկ ֆինանսական նախահաշվում նշված է 2 ամիս: Անհրաժեշտ է հաշվի առնել, որ վճարումը կապահովվի միայն մեկ ամսվա համար:

Ֆինանսական նախահաշվում ներառված չէ գաստրո տաղավարի համար անհրաժեշտ բոլոր պրոդուկտների, սննդամթերքների ու սպասքի ապահովման վերաբերյալ տեղեկատվությունը:

Միաժամանակ միջոցառման օրը, վայրը, այս տարվա թեման, դիզայնը, մենյուն, համերգային ծրագիրը, բլոգերների և հաղորդավարների ընտրությունը և մյուս բոլոր մանրամասները պետք է քննարկվեն և հաստատվեն Զբոսաշրջության կոմիտեի կողմից:

Կայացավ քննարկում, որի արդյունքում
Հանձնաժողովը միաձայն որոշեց՝

1. **Առաջարկել** Ծրագրի հավելված 2-ի 3.2 կետով նախատեսված **«Զբոսաշրջային ներքին ցուցահանդեսի կազմակերպում և խթանում»** միջոցառման իրականացման նպատակով հայտարարված մրցույթի հրավերով սահմանված չափորոշիչներին համապատասխանող 1 (մեկ) կազմակերպությանը՝

• **«ՄԵՆՔ ՓՐՈԴԱՔՇՆ» ՍՊԸ**-ին շտկել իր կողմից ներկայացված ֆինանսական առաջարկը, հաշվի առնելով Հանձնաժողովի դիտարկումները:

Մասնավորապես՝

- վերանայել աշխատավարձերի չափը հաշվի առնելով, որ աշխատավարձը դրամաշնորհի շրջանակներում չի կարող գերազանցել ծրագրի ընդհանուր արժեքի **10%-ը**: Ուստի ֆինանսական նախահաշվում 2.1, 2.2, 2.4 կետերի համար կարող է նախատեսվել աշխատավարձ, այդ թվում 1.1 կետով ծրագրի ղեկավարի համար,

- շտկել նախահաշվի 1.1 կետում ծրագրի ղեկավարի աշխատավարձի միավորի քանակը՝ նշված է 3 ամիս, որը չի համապատասխանում կազմակերպության կողմից ներկայացված ծրագրի տևողությանը (01.08.2025-07.10.2025),

- հանել ծրագրային ծախսերից հանրային կապերի մասնագետի ծառայությունը, քանի որ հրավերի 2.3 կետով այն չի պահանջվում,

- հանել ծախսերից կամ իրականացնել ոչ դրամաշնորհի հաշվին 2.5 կետով ներկայացված ծրագրի համակարգման ծառայությունը, քանի որ դրամաշնորհի հրավերով և կազմակերպության ներկայացված ֆինանսական նախահաշվով նախատեսվում է ծրագրի ղեկավար,

- անհրաժեշտ է նաև հաշվի առնել, որ ֆինանսական նախահաշվի 2.19 կետով սահմանված 3*6 չափերով տաղավարում պետք է միաժամանակ լինեն 8 անձ, 3 սեղան՝ 2 մեծ, 1-ը համեմատաբար փոքր,

- համաձայն դրամաշնորհային հրավերի նախատեսված է 1 ժամ տևողությամբ համերգ, հետևաբար 2.23 կետով սահմանված նվագախմբի հոնորար չի նախատեսվում, նպատակահարմար է դա նախատեսել համերգային ծրագրի համար,

- 2.25 կետում կազմակերպությունը պետք է հստակեցնի, որ տրանսպորտային ծառայությունները նախատեսված են նաև մարզերի համար,

- 2.28 կետով սահմանված նոթատետրերը և գրիչները, եթե տրամադրում է հյուրանոցը՝ ընդունելի է, իսկ եթե նախատեսվում է տպագրել ապա կարիք չկա, քանի որ ԶԿ-ն կտրամադրի իր բրենդինգով տարբերակները,

- առաջարկել կազմակերպությանը հստակեցնել 2.36 կետով նախատեսված ֆոտոզոնայի համար նախնական ի՞նչ է պատկերացնում կազմակերպությունը, որի համար նախատեսվել է 26 400 ՀՀ դրամ,

- հաշվի առնել, որ 2.39 կետով դրոշի պատվանդանի ձեռքբերման պարագայում անհրաժեշտ է հանձնել Զբոսաշրջության կոմիտեին, այլապես նախատեսել վարձակալություն և դրա մասին նշել ֆինանսական նախահաշվում,

- ընդունել ի գիտություն, որ 2.42 և 2.43 կետերը համաձայն դրամաշնորհային մրցույթի հրավերի պետք է նախատեսել միջոցառումից 1 ամիս առաջ, իսկ ֆինանսական նախահաշվում նշված է 2 ամիս, վճարումը կապահովվի միայն մեկ ամսվա համար,

- Ֆինանսական նախահաշվում ներառված չէ գաստրո տաղավարի համար անհրաժեշտ բոլոր պրոդուկտների, սննդամթերքների ու սպասքի ապահովման վերաբերյալ տեղեկատվություն,

- միջոցառման օրը, վայրը, այս տարվա թեման, դիզայնը, մենյուն, համերգային ծրագիրը, բլոգերների և հաղորդավարների ընտրությունը և մյուս բոլոր մանրամասները պետք է քննարկվեն և հաստատվեն Զբոսաշրջության կոմիտեի կողմից:

2. Առաջարկը ընդունելու դեպքում շտկել Ծրագրի ֆինանսական նախահաշիվը և մրցութային հանձնաժողովին՝ **մինչև 2025 թվականի հունիսի 20-ը,** ներկայացնել շտկված տարբերակը:

3. Առաջարկը ընդունելու դեպքում, կազմակերպության՝ **«ՄԵՆՔ ՓՐՈԴԱՔՇՆ» ՍՊԸ**-ն, Ծրագրի հավելված 2-ի 3.2 կետով նախատեսված **«Զբոսաշրջային ներքին ցուցահանդեսի կազմակերպում և խթանում»** միջոցառման իրականացման նպատակով հայտարարված մրցույթի արդյունքում հաղթող ճանաչել և կամակերպության հետ կնքել դրամաշնորհային պայմանագիր:

4. Հանձնաժողովի որոշումը ներկայացնել զբոսաշրջության կոմիտեի նախագահի հաստատմանը:

Ա.Մկրտչյան (Հանձնաժողովի նախագահ)	-	_____
Դ.Կարապետյան	-	_____
Ա.Բաբայան	-	_____
Լ.Բասմաչյան	-	_____
Զ.Հայրապետյան	-	_____
Ա.Ոսկանյան	-	_____
Շ.Հովսեփյան	-	_____